

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

ՏԻԲԵՐՈՒՄ ԵԱՒԱՎԱՐՆ

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Արեւը նոր ծագեր էր, և առանց նայելու թէ ժամն դեռ շատ կանուխ է, աղքատներու ամբոխ մը խոնուած կեցեր էր Մելանիայի տան առջև, սպասելով որ պատրիկուհին դուրս գայ: Եւ ահա շատ չանցաւ՝ Մելանիա և Վաղերիա երեցան սիւնազարդ գաւթին սեմին վրայ: պատրիկուհին իւրաքանչիւրին ողորմութիւն քաշխեց՝ անուշիկ կերպով խօսելով այն թշուառ ամբոխին հետ՝ որ պատառուտուն հագուստով և կիսամերկ կեցեր էր իր չորս կողմը բոլորած: յետոյ աղքատներուն օրհնէքն ընդունելով և զոհ օրտով՝ որ կրցաւ այդ դժբախտներուն խեղճութիւնը մեղմացնել, բարեպաշտ տիկինն ճամբայ ելաւ դէպ ի փաթիւղայի հիւանդանոցը:

— Դառ տխուր է Հոռովմի վիճակն, ըսաւ Վաղերիա, որ կը փաշէր պատրիկուհւոյն քովէն, և քիչ ատենէն կարելի պիտի ըլլայ մեռնալիւրու երկրի կոչել այս քաղաքս:

Երբ Աստուած բարկացած կը խօսի, մարդ գետին կ'իյնկնայ, պատասխանեց Մելանիա: Թե՛րեւ մենք արժանի էինք այսչափ աղէտներու: Աստուած կանուխ թէ՛ ուշ կը պատժէ, և իր ահաւոր բարկութեամբ կը հարուածէ անօրէն ժողովուրդները և աշխարհիս վրայէն կը ջնջէ հօգր ազգերու անունը:

Այսպէս խօսակցելով երկու կիներն հասան հիւանդանոցը: Մելանիա իսկույն մտաւ կամարակապ սրահը, իսկ իր բարեկամուհին քիչ մը ետ մնաց՝ փայփայելու համար փոքրիկ աղջիկ մը՝ որ դեռ նոր ազատեր էր ժանտախտէն և ապրիկոթեան վիճակին մէջ կը գտնուէր:

Վաղերիա մինչդեռ այդ փոքրիկ աղջիկը թեւերուն վրայ առած՝ Մելանիային ետեւէն երթալու վրայ էր, յանկարծ Մեռելաթաղի սեւ գգեստ հագած և դէմքը կնգուղով ծածկած մարդ մը իրեն մօտենալով՝ ցած ձայնով մ'ըսաւ:

— Վաղերիա, ի՞նչ չես ուզեր գլխուս չարիք մը բերել՝ բնաւ զարմանքի նշան մի՛ տար և ոչ ալ աղաղակ հանէ:

Այս ձայնը լսելով՝ Վաղերիա գլխէն մինչև ոտքերը սարսուռ մը գգաց, և ջնանց օրտին բաբախումը բռնել, և յետոյ արիանալով հարցուց անմասօթին:

— Ի՞նչ, ո՞վ ես դու:

Մեռելաթաղի գգեստ հագնողի վայրկեան մը բացաւ փողարկուած դէմքը, և Վաղերիա սկսաւ

երբայ ինչպէս թէ գետին ինկնալու վրայ ըլլար, և գոչեց լի ուրախութեամբ:

— Մարկեղոս, եղբայրդ իմ, վերջապէս նուրէն կը տեսնեմ գրեզ:

— Լո՛ւէ, ըսաւ Մարկեղոս, սարսափահար աչքերը չորս կողմը դարձնելով, և յետոյ աւելցուց արագաբար խօսելով: Ամենէն ուշ՝ ժամէ մը գնա աղիսայէն տնակը. ես քեզի պիտի սպասեմ հոն: Բայց չըլլայ թէ մէկու մը իմացնես իմ վերադարձս, ապա թէ ոչ՝ մահուանս պատճառ կ'ըլլաւս: հնազանդէ՛ կամքիս, խոհմամբար չարժէ և լուռ կեցիր:

Այս խօսքերս արտաստեղծով՝ Մարկեղոս հապանեալով փախաւ գնաց անկէ, բոլորովին գառաւցանքի մէջ թողլով Վաղերիան:

Որիորդն վայրկեան մը մնաց հոն անշարժ, շուտաւ և գրեթէ անզգայ: յետոյ հազիւ յիշեց Մարկեղոսի խօսքերը, առանց ըմբռնելու անոնց նշանակութիւնը, և անկարող՝ մտածութիւն մը կ'ազմելու, և դեռ շուտաւ՝ վիճակի մէջ՝ մտաւ հիւանդանոցին ընդարձակ սրահներէն մին, և նըստաւ հոն՝ դէմքը ծածկելով ձեռքերովն: Մարկեղոսի խօսքերն չարուհակ կը հնչէին տանը ականջէն, և կամաց կամաց իր հոգեղն վրայ կը տիւրէր դժբախտութեան մը նախազգացումն՝ որ կը դառնացնէր տնոր գգացած ուրախութիւնը եղբոր տեսութեան առթիւ: Ասկէ զատ, չէր համարձակիր հիւանդանոցէն հեռանալու, չգիտնալով թէ յետոյ ինչպէս պիտի աղբարացներ իր բացակայութիւնը, միանգամայն մեծ ապերախութիւն մը կը համարէր իր բարեբախտութիւնի ծածուկ օրտին մէջ գաղտնիք մ'ունենալը: Երկար ատեն անորոշ վիճակի մը մէջ մնաց, անտուգութեան ձեռքը մատնուած: Բայց վերջապէս արիանալով՝ որոշեց փախչիլ: Եւ ահա մինչդեռ Մելանիա հիւանդանոցին սրահներուն մէջ կը փաշէր հիւանդներուն վրայ հսկելու համար, Վաղերիա ահապարանքով դուրս ելաւ անկէ, և սկսաւ ահուհողով և կորագլուխ առաջ՝ երթալ՝ վախելով որ չըլլայ թէ ճանչուողը մը հանդիպի: և յետոյ ուղղուեցաւ դէպ ի կապենա Գուրգ Թանդուկ ճամբան: Բայց դեռ տնակը առաջնորդող նրբափող զոցը չմտած՝ կանգ առաւ և ուժասպառ նստաւ գետինը, որպէս զի վայրկեան մը հանգչի: և սկսաւ լալ՝ մտածելով որ յանցատուր կ'ընէ որ պէտք զոգողալով ծածուկ կ'երթար տեսնելու եղբայր մը, որուն բացակայութիւնն մինչև հիմայ սաստիկ մտաւտանշտութեան մէջ ձգել էր գինքը:

— Ինչո՞ւ: Մելանիայի տունը չեկաւ Մարկեղոս գիտ գտնելու համար, կ'ըսէր ինքրիկն օրիորդն: հոն ամենալու ուրախութեամբ պիտի ընդունէին գինքը, և ամենքս ալ պիտի տեսնէին անառակ որդւոյն վերադարձը: ... Աստուած իմ, գթայ ինծի որ այնչափ վիշտ քաշեցի, և մի թողոր որ եղբայրս յանցատուր ըլլայ: Վաճն գի՛ր ինքորդաւոր վերադարձն և իր խօսքերն զիս կը դողա ցրնեն:

Գետնակ վեր ելլելով՝ դարձեալ ճամբան առաջ տարաւ: Վաղերիա, բայց քիչ վերջը նորէն կանգ առաւ՝ տեսնելով հեռուն այն տնակը՝ ուր այնչափ վիշտ քաշեր էր, և ուսկից փախեր էր յուս

օտարաւորութենէն նեղուած ինքզինքը սպաննելու համար: Այն տեղն շատ տխուր կ'երեւէր, և դառն նախազգացումը մը կ'ըսէր անոր՝ թէ այն տնաւ կին մէջ նորէն պիտի լաւ: Վերջապէս հասնելով հոն՝ բացաւ կիսափակ դուռը և մտաւ առաջին օճեկակը: Բայց յանկարծ օտարափառար ետ քաշուեցաւ, տեսնելով հոն գորշ մագերով մարդ մը՝ որ օճեկակն մէջտեղը կանգնած կեցած բազկադասարանք և աջքը երկինք վերուցած՝ ճոռճաբանութեամբ կը խօսէր օտար լեզու մը: Անգլէբերան էր, որուն յանկարծակի բանաւ տեսնեալան երակը բռնած՝ յանպատրաստից պառտեղազմական երգ մը կը յօրինէր:

Վաղերիա շինելով տեղէն չարժի՛ կը նայէր անոր, և ահա բանաստեղծն տեսնելէն լըծուած ընկաւ գետին, և գտնելով ինքզինքը շնորհազեղ օրիորդի մը դիմաց՝ որ երկուսը կեցեր էր իր առջեւ՝ գոչեց իր բնիկ բարբառով:

— Ո՛վ ես դու, օրիորդ, հայրենիքիս ծինին պէս ճերմակ երեսով և սեւ մագերովդ: Երկնայինն վաթիւր՝, որ կ'երեւնա ինծի:

Վաղերիա չնասկցաւ քերթողին բանաստեղծական խորհուրդը, և տեսնելով իր դիմացը այն յաղթանդամ օտարականը՝ զարհուրեցաւ, և աղաղակ մը հանելով՝ գրեթէ փախելու վրայ էր, և ահա վրայ հասաւ Մարկեղոս, և քաջալերելով տարաւ գինքը կից սենեակը:

Իրարու քով նստելէն վերջ՝ եղբայր և քոյր սաստիկ ուրբախութիւն մը զգացող իրար կրկին տեսնելուն վրայ. յետոյ մանրամասն պատմեց վաղերիա քաշած վշտերը, և թէ ինչպէս վեհանձնաբար հիւրընկալեց գինքը Միջանից պատրիկոսին, և վերէն աւելցուց:

— Եղբայր, շիտալը գրուէ ինծի, և ազատէ գիտ սիրտն տազանապող տարակուսէն: Ըսէ ինծի թէ ինչու ամենէն կը ծածկուիս՝ ինչպէս թէ ոճրագործութեամբ մը յանցաւոր եղած ըլլաս:

— Ես ոճրագործ չեմ, բայց մատնիչ եղած եմ հայրենիքիս և կ'առեմ քաղաքացիներս, պատասխանեց Մարկեղոս:

— Ո՛հ, լու՛հ, ես չեմ հաւատար քեզի: Ն'ուրացուիր այն երկիրը՝ որ ծնած է քեզի, կարելի չի չէ առել գանուկ՝ որովք մեր մի և նոյն լեզուն կը խօսին, և մեզի հետ մի և նոյն հայրենիքը ունին, գոչեց Վաղերիա:

— Հայրենիք... անկան անուն, վրայ բնութա Մարկեղոս դառնութեամբ: Միթէ հայրենիքս չէ՞ այն երկիրն՝ որ զլացաւ ինծի հացը: Քաղաքացիներս չեն անուր՝ որովք գիտ վնասեցին երբ իրենց օգնութեան դիմեցի... Բայց չիտսիմ ասոնց վրայ: Միայն կը յիշէս դու որ Հռոմի թողուցած օրս քեզի ըսած էի՝ թէ կամ հարստացած պիտի վերադառնամ քոզի, և կամ այն կը պիտի չտեսնես զիս: Աղը, քեզի ճշմարիտն ըսի, հիմա ես հարուստ եմ, և կ'ուզեմ քեզի հետ միասին վայելել հարստութիւններս:

— Չեղք ձեզցի՛ր ուրեմն մեր մօրեղբօր ժառանգութիւնը, հարցուց Վաղերիա:

— Ո՛չ. բոլորովին աղքատ հասալ Դաղմատիա, և նոյնպէս աղքատ և պարտատէղներէն նախատուած մեկնեցայ անէկ...: Գլուխստացած է գուրկ ո՛ր և է միջոցէ՛ գիտիչ Հուանենա, և Ունորիտոսին ներկայանալով իբրեւ հռոմէայեցի պատրիկ, խնդրեցի իրմէն ու ինձի տեղ մը տայ իր գործադրին մէջ: Ապա ընդունուեցաւ մը գտալ նայսէրն, որ շատ քիչ հոգ կը տանի Հռոմ մի վրայ, և հազիւ շնորհուեցաւ ինձ թեթեւագէն գինուոր ըլլալ...: Գլուխստացած թողուցի Հուանենան, և ուրիշ երկիրներու մէջ, օտար ազգերու քով հերաստիութիւն զտայ: և վեհանձն մարդ մը զիս դժբախտութենէս դուրս հանեց և հարստացուց:

— Ա՛յապա՛նմ, յայտնէ ինձի այդ բարբարոս մարդուն անունը, որպէս զի յիշեմ գինքը աղօթքներուս մէջ, ըսաւ Վաղերիա:

— Աղօթքներուդ մէջ... որովհէտ կ'աղօթես դու, վրայ բերաւ Մարկեղոս չարածի հեգնութեամբ:

— Աստուծոյ, պատասխանեց օրիորդն: Այն Աստուծոյ՝ զոր ես չէի ճանչնար ուրիշ անգամ, և հիմայ յայտնութեամբ մտքիս՝ որ աստեմ մը կուրցած էր տղայտուեցաւ: Այն Աստուծոյ՝ զոր Մեւրախի կը պաշտէ, Իկեոս կը մեծարէ, և որուն առջեւ կը խոնարհի Հերոնիմոսի բարձր հունահարն: Մենք յանցաւոր էինք, ով եղբայր, երբ հանդիմանալ կենտրին վրայ բնաւ հոգ չէինք տանիր, և կը կարծէինք թէ մեր կենալի միակ նպատակն գրաստանն ըլլայ: Ա՛հ, մէ. գերագոյնն Աստուծո չստեղծեց մարդը անոր համար միայն որ ծնանի և ծերանայ և առանց բարի գործ մը կատարելու մեռնի, յետոյ իր տեղը թողու հեռազայ մարդիկներու, որովք այնպէս աներեւելի քանան գահալիծուելով ոչնչութեան մէջ: Եթէ այդպէս ըլլալ՝ մարդկային տեղեւորմի իմաստութիւն պիտի ըլլար, սակայն գերագոյնն իմաստութիւնն չի կրնար յիմարութիւն մ'ըլլալ: Մենք տեղեւորեմ ենք գերագոյն նպատակի մը համար, և պէտք ենք սերմանել յաւիտեանակահոտութեան համար:

Վաղերիայի տօգոյն դէմքն կասկարմիր դարձեր էր խօսելու: Աստեւ և սեւ աչքերն կը փայլէին շողշողուն: Մարկեղոս խօսող նայուածքով մը կը դիտէր գինքը, և արհամարհական կերպով ուսերը թօթկնելով աւելցուց:

— Ես արդէն կը գուշակէի որ միտքդ տկարացնելով՝ քեզի այսպէս ապուշ մը պիտի դարձնէին:

— Եղբայր, ես չեմ նախանձիր իմաստութեանդ վրայ, պատասխանեց Վաղերիա հանդիմատութեամբ, և բնաւ չեմ անուրից պատրիկիդ տըմարդութենէն:

— Լսէ ինձի, Վաղերիա, վրայ բերաւ երկտասարդն, դու պէտք ես հետո գալ, փայլէին ապագայ մը կը սպասէ քեզի: Դու կը սիրէիր թանկագին օճեկները, ապարանշահները և մեռաբոսայ գանեսները, արդ քովդ գտնուելով՝ պիտի զարգարուիս կայարուհայ պէս չըջապատուած կաքաշուհներէն՝ երգերու և պարերու մէջ կենալը պիտի անցընես, հիացումն պատ

1. Վաթիւր, Վաղերիաական տարուածութիւն մ'էր:

ճառելով օտարազգի երիտասարդներուն, որոնք հառաչելով պիտի դիտեն զքեզ ոռոգերուդ առջև խոնարհած:

Մարկեղոս վառվառուն եռանդով մը կը խօսէր, որպէս զի հրապուրէ օրիորդին սիրտը՝ բայց նա անտարբերութեամբ մը կը լսէր, վասն զի այլ եւս առաջնաւն երազողն չէր. դժբախտութիւնն զինքը զգաստացուցեր էր, և պատրկիկն կենդաւն զոյնիւրով նկարագրած վայելքներն՝ գեղեցմանի մը պաղ քարին պէս սառած կը թողուին իր սիրտը:

— Ուրեմն, պատրաստ ես ինծի հետ գալու, հարցուց անոր Մարկեղոս դաժմանութեամբ:

— Այո, կու գամ հետդ, բայց ոչ եթէ հարբս, տուլիաներդ վայելելու. այլ միշտ քողդ կենալու և քեզի լսել տալու համար ճշմարտութեան խօսքերը, որոնք կ'առաջնորդեն գերագոյն բարւոյն. այս նպատակաւ միայն կը թողուիմ բարեխաղախ և կ'ըսեմ միաս բարով հայրենիքիս՝ առանց իսկ հարցնելու թէ ո՞ր պիտի տանիս զիս:

— Դոյն իսկ այսօր պէտք ես գալ հետս, առանց բան մը իմացնելու անոր՝ զոր բարեբաւութեան կը կոչես, ըսաւ Մարկեղոս հրամայական ձայնով:

Վաղերիս զարմացած նայեցաւ անոր երեսը, և յետոյ յանկարծ զայրոյթի արտայայտութիւն մը նկարուեցաւ իր չնազագեղ դէմքին վրայ, և արեւոյց ազդողաբար.

— Կը զատանցես դու, եղբայր, եթէ կը կարծես որ ես կրնամ ամենէն ամօթիս արարախ տուլիանք անպատուել զիս: Դու շատ քիչ կարեւորութիւն կու տաս իմ պատուոյս, վասն զի կ'ուզես որ ես իմ պատիւս կորսնցնելու վրէժն ունեզի մէջ դնեմ: Ինչ պիտի ըսեն ինծի, եթէ ես չարագործի մը պէս ծածուկ թողում Մէլա նիայի տունը:

— Ի՞նչ կարեւորութիւն կու տաս անիմ տ բարեկամներուդ խօսքին: Վերջէն պիտի իմանաս թէ ես ինչո՞ւ ինքզինքս ստիպուած եմ ուրիշներէն ծածկելու. հիմա զու պատրաստուէ՛ հետս գալու:

— Պարապ տեղ կը յուսաս ատոր, ըսաւ Վաղերիս վերական կերպով. եթէ փառելովս հարկ ըլլալ ինծի քու կանաքը ազատուի, վայելքան մ'ալ չէի գնաղաղիր. բայց որովհետեւ հարբս, տուլիաներդ ինծի հետ վայելելու համար միայն զիս կ'ուզես հետդ տանիլ, ես չեմ գար, դու միայն գնա, վասն զի չեմ թողորդ այն հիւրաւսէն տունը՝ որ զիս ընդունեցաւ երբ ամէնչոյն զիս ծնունդէն. չեմ թողորդ զայն վատութեամբ՝ հիմա որ այլ եւս պէտք չունիմ հացի. . . . Մեր մօր անուշ սիրելի է ինծի, չեմ ուզեր զայն ազատելու. ուստի, դարձեալ կը կրկնեմ քեզի որ ես առանց Մելանիային իմացնելու՝ չեմ գար քեզի հետ, դու միայն գնա:

— Ուզես չուզես պիտի գաս ինծի հետ, պոռաց Մարկեղոս զայրացած. հռովմական օրէնքներն ինծի իրաւունք չու տան քեզի հրամայելու. միթէ չե՞ս գիտեր որ ես քու խնամակալդ եմ:

— Զի կրնամ օրինաց առջև բողբոջել նա՞ որ

կ'ուրանայ հայրենիքը, և չի համարձակիր իր քաղաքացիներուն երեսնալու: Երանի՜ թէ ըսածս սխալ ըլլալ, եղբայր, բայց սոսկալի ձայն մը կը չնշէ ականջիս որ դու օրէնքէն դուրս ելեր ես. . . . Մարկեղոս, դարձիւ ուղիղ ճամբուն վրէժն, և մի ուզեր զիս մասնակցել վատահամբաւութեանդ: Առանց մեղքի մարդ չկայ Աստուծոյ առջև, բայց զղշուով ամենէն մեղաւոր հոգին ալ կը մարգուի:

— Լո՛ւ հ մի ձանձրացներ զիս ապուշ առասպելներովդ, և համակամէ՛ ինծի հետեւելու, վասն զի եթէ յամառութեամբ կամքիս դէմ կե՛նա՞ս բռնութիւն պիտի բանեցնեմ վրադ, և զքեզ թեւերուս վրայ առած պիտի տանիմ նաւակը՝ որ զմեզ պէտք է տանի Հոռովին հետու:

— Լաւ ուրեմն, բռնութիւն բանեցուր, տանի՛ անդամներս, ծեծէ՛ զիս եթէ կ'ուզես, բայց ես ամէն բան պիտի ընեմ բռնաւորութեանդ դիմադրելու համար:

Այս ըսելով Վաղերիս դէպ ի դուռը գնաց, որպէս զի անակէն դուրս ելլէ երթալ, բայց Մարկեղոս կատաղաբար տեսէն վազելով և ուժով մը թեւէն բռնելով՝ նստեցուց զինքը հոն բռնի:

— Թող տուր զիս և մի նուաստանար, ո՞վ եղբայր, տանշելով քոյրդ, ըսաւ Վաղերիս, զուր տեղ շնալով մանոր ձեռքէն պրծիլ:

Մարկեղոս զայրոյթի վերջին ծայրն հասած՝ դեռ սենի կը սեղմէր զանիկայ, և ահա յանկարծ սենեկի դռներէն մին բացուեցաւ, և Ալարիկոս առաջ գալով՝ մօտեցաւ պատրիկին, և ըսաւ անոր.

— Հանգարտ թող քոյրդ. արդէն երէկ իրիկուն խորհուրդ տուի քեզի որ մի խել զանիկայի կը բարեկամներուն ձեռքէն, սակայն դու արհամարհեցիր խորհուրդս, հիմա նորէն կ'ըսես քեզի մի բռնազաւորս անոր կամքին:

Մարկեղոս ականքերը կրճռեց, բայց չհամարձակեցաւ դիմարդել անոր կամքին՝ ուսկից կախուռն ունիլ իր բախտն:

— Ելիր գնա, օրիորդ, վրայ բերաւ Ալարիկոս, և աղօթէ՛ եղբօրդ համար. Աստուած կը լսէ հրեշտակներու աղօթքին, և դու հրեշտակ մ'ես գեղեցկութեան:

— Հնորհակալ եմ, վեհաճն մարդ, եթէ չեմ սխալիր, դու ես եղբօրս բարեբաւս. հսկէ ուրեմն անոր վրայ, քեզի կը յանձնեմ զինքը, ըսաւ Վաղերիս, առանց գիտնալու որ կը սեղմէր Գրթիցիներու թագաւորին ձեռքը:

— Մի՛ վախեր. եթէ ատրիկայ ալ քեզի չափ երախտագէտ ըլլա՞յ՝ զիս իրեն բարեկամ մը պիտի ունենայ, պատասխանեց Ալարիկոս, որ քիչ առաջ լսեր իր Մարկեղոսի և Վաղերիսի խօսակցութիւնը:

— Եղբայր, ըսաւ օրիորդն պաղտազին ձայնով, բարկացած հոգով՝ չբաժնուիրք իրարով. Մարկեղոս երեսը դարձուց Վաղերիսայն, և զայրացած աւելցուց.

— Գնա, ես այլ եւս քոյր չունիմ: Վաղերիս լացաւ հեծկտագին, և դիմելով երիտասարդին վրայ՝ ձեռնամած գոչեց.

— Մարկեղոս, մեր մօր սիրոյն համար, մի՛

ուզել որ բարկացած իրարմէ բաժնուիրնք . եղբայր, զձեռն ինծի:

Վաղերիայի ողբազին ձայնն յուզեց պատրիկը, և աւելի զօրաւոր եղաւ բնութեան քան թէ զայրոյթին աղաղակն, և Վաղերիայի ձեռքը սեղմելով ելաւ տնակէն:

— Երթաւ բարով, Մարկելոս, ըսաւ Վաղերիա, կանգ առնելով ճիշդ այն տեղը՝ ուր ամիսներ ատաղջ բաժնուիրնք էր երկուստադէն . աղէ՛ղեռ ժամանակ ունիս, թող այն հայրստութիւնները՝ որոնք գթեց պիտի չերջանկացնեն, և եկուր միասին ենթանք Մեկանիայի տունը:

— Քեզի պէս ես ալ երախտագիտութեան պարտք մ'ունիմ կատարելու, և չեմ ուզեր ապրեալստ զտնուիլ. բայց մի՛ վախեր, նորէն իրաւուն հետ կը տեսնուիրնք, և դու՛ կանուխ թէ ոչ՝ պիտի գաս ինծի հետ ...:

Վաղերիա չպատասխանեց, գլուխը կռնիցոց երբօրը ուսին վրայ և լացաւ նորէն . յետոյ հեծկտանքը բռնելով՝ հեռացաւ աղիւսալէն տընակէն:

Մարք մը ականատես եղած էր Մարկելոսին և Վաղերիայի հրաժեշտի ողջունին . սա ինքն էր Տիբերիոսի հաւաւարն, որ կործանած տան ու գործիկի պատերուն միջէն տեսած ու ճանչցած էր օրիորդը, որ երբեմն փափուկ զգացում մը կ'ազդէր իրեն վրայ, երբեմն ալ զայրոյթը կը շարժէր, վասն զի անոր գէմքն իրեն կը յիշեցնէր ոճգործութիւն մը: Ոչքովն հետեւելով Վաղերիայի, ձերանի Սարգիսն կը սեղմէր կընուի՝ այսպէս ըսելով.

— Մեղադրա պէտք չէ որ բնակի անմեղի տան մէջ. այդ օրիորդն՝ որուն վրայ աշխարհ կը հիւսնայ Վեկոս փուլվիտս, կը խաբէ իր բարեկամները անմեղաբն կեդաւորութեամբ. անոնք սրբուհի մը կը կարծեն զանիկայ, մինչդեռ նա այցելու կ'իրթայ երկտասարդ մը և կու լայ անկէ բաժնուիրնք վրայ ...: Վեկոս պէտք է որ գիտնայ ճամբարիորդ, ես պիտի վերցնեմ անոր աչքերուն վրայի դիմակը, որպէս զի որոշ տեսնէ:

Մինչդեռ հաւաւարն խաբուած սուտ երեւոյթներէն՝ վերջացնելու վրայ էր մեխաբօսութիւնը, խեղճ Վաղերիան սաստիկ վախացած Մարկելոսի խորհրդաւոր վարմունքով վրայ, և խռոված այն տարակուսող թէ անիկայ միացած ըլլալ չոգմի թշնամիներուն հետ, ատաղջ կ'իրթայր գէպի փարթոյկին հիւսանողանքը, չգիտնելով թէ ինչպէս պիտի արգարացնէ Մեկանիային դիմաց իր բացակայութիւնը:

Իրանցէն, պատրիկուհին անոր կը տպասէր տագնապալից, և ամէն տեղ զանիկայ փնտռելն վերջը՝ հեռուէն տեսնելով զիմքը գէմը վազեց՝ ըսելով իրեն.

— Ինչո՞ւ հեռացար:

— Կրնամ հիմա՞ պարտուակով մը խաբել գթեց, պատասխանեց Վաղերիա, բայց չեմ ուզել սուտ խօսիլ. մի՛ միայն այսպէս և անգտաւնիկ պատճառ մը ստիպեց զիս տեղէն հեռանալու, ստանց քու հաւանութիւնդ առնելու, բայց այդ պատճառն ինծի անմահկան գաղտնիք մ'ըլլալով՝ չեմ կրնար քեզի յայտնիլ զայն:

Մեկանիա աչքերը սեւեռած նայեցաւ օրիորդին վրայ, իբր թէ ուզէր կարգաւ անոր սիրտը. յետոյ ձեռքը անոր ուսին վրայ կռնէնցնելով՝ ըսաւ.

— Գուտը, ես քեզի բան մը չեմ հարցնիր, թէ և խօսքերդ ինծի զարմանք ալ պատճառեն, — իս ճշմարիտն ըսի քեզի, վրայ բերաւ Վաղերիա:

— Կը հաւատամ քեզի, ասելցուց պատրիկուհին, և զուրս ելաւ հիւսանողանցէն վշտազին օրիորդին հետ, որ հագոյ կրնար ցաւը ծածկել:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԳՈՐԱՑԻՆԵՐՈՒՆ ԲԱՆԱԿԸ

— Ո՛հ, ինչո՞ւ հրեշտակային գէմք մը դիմաւ կի տեղ կը ծառայէ անպիտան կոնշ, կ'ըսէր ինք իրեն Գեկոս փուլվիտս, որուն առջեւ ամբաստաններ էր հաւաւարն զՎաղերիա. և այսպէս ըսելով կը շրջագայէր իր պառկելու տեղիկին երկայնութեամբ, սաստիկ տագնապի մը մէջ ընկզմած:

Իրկարտաւն տագնապալից շրջագայէլն վերջ, պատրիկն կանգ առաւ աւագ ժամացոյցի մ'առջեւ, և անոր նայելէն ետքը՝ գոչեց. « Ճամանակն հասեր է, և ես չեի մտածեր »: Յետոյ անապաւրանքով պծնաւոր վերաբրիտն հանգնելով՝ տնէն դուրս ելաւ և գնաց չոգմի մշական հրապարակը, և կանգ առաւ կոնկորդիա տաճարին քով՝ ուր հաւաքուած կեցեր էր բազմութիւն մը մարդկան՝ դիտելու համար սայլելու և կտաքերու երկար շարք մը՝ որ կեցեր էր տաճարին դիմացը:

Տասնէն աւելի էին սայլելն, զորս կը քաշէին չոգմի մշական Գալտին խոշոր ու քաշալանջ եղաներն, վրանին բեռ չունէին. իսկ կտաքերն հինգ էին, և կը կոչուէին կոսաք տտուկալայց՝, վասն զի երկու անիւներուն վրայ կը գտնուէր ատենակալներու փողոսկրեայ թիկնաթոռն:

Գեկոս կամացուկ մը փախչելով բազմութեան միջէն՝ մտաւ տաճարը և մօտեցաւ սինկղիոտոսներուն, որոնք հինգ հոգի էին և կը կրէին վրանին իրենց աստիճանին պատուանշանը, այսօր ինքն է միջնածիւրանի պծողաւոր վերաբրիտն, որ եզերուած էր ծիրանիէ լայն ժապաւէնով մը և կ'իշխէր մինչեւ տաքերը, բաց թողլով միայն կիսասարունգ կօշիկները՝, որոնց մէկուն վրայ կար փողոսկրեայ մահիկաձեւ մը:

Սինկղիոտոսներէն ոչ շատ հեռու՝ գեոմինը դրուած էին տասն խոշոր տոպրակներ, որոնք կը բովանդակէին հինգ հազար լիտր ոսկի, ուրիշ քսան տոպրակներ՝ լեցուն երեք հազար լիտր արծաթով, և հինգ փոքրիկ տոպրակներ՝ լեցուն

1. Carrus Magistratuum.
2. Toga laticlava.
3. Calcei.
4. Lunetta di avorio.

պղպեղով¹. այս էր ահա Հոռովմայեցեց Գոթա-
ցիներուն բանակը ճամբած տուրքն:

Հախորդ օրերուն մէջ պատգամաւորութիւն
մը գնացած էր ինչամիջներուն բանակը, որպէս
գի զայիւր զին որ Ալարիկոս հետանայ, և պատ-
գամաւորներն մէկը՝ որ վասիլ կը կոչուէր,
ըսած էր բարբարոսներու թագաւորին, թէ «Մի
կարծեր որ Հոռովմայեցի բոլորովին կորսնցու-
ցած են զինուց վարժութիւնը, այլ մէկ սիրտ և
մէկ հոգի եղած խուռն բազմութեամբ պիտի գան
վրաց իրենց հայրենիքը պաշտպանելու համար»:
«Աւելի լաւ», պատասխանած էր Ալարիկոս, և
ամենհոգորի մը գոռոզութեամբ՝ ուզած էր որ
իրեն յանձնեն թէ՛ քաղքին բանալիները և թէ՛
հոն լողող բլուր գերիները:

Պատգամաւորութիւնն «կատած» Հոռով դար-
ձաւ, և երբ երկրորդ անգամ գնաց, այն ատեն
Ալարիկոս խոստացաւ վերցնել պաշարամը, այն
պայմանաւ միայն՝ որ Հոռովմայեցիք տուրք վճա-
րեն Գոթացիներուն: Ահագին էր Ալարիկոսին
պահանջած տուրքն, զոր հաւաքելու համար հար-
կադրուեցան օգնութեան հասնիչ Հոռովմայեցի
հարուստներն՝ որոնք սակաւաթիւ չէին նոյն ա-
տեն, վասն զի շատ պատրկական ընտանիքնե-
րու տոհմաւորներն կը հասնէին մինչեւ չորս հա-
զար լիւր սոկի տարեկան եկամուտի, առանց
հաշուելու իրենց ընդարձակ կալուածներէն ըն-
դունելու խոնարը. բայց այս անգին բանով հաւ-
ղեմը, պահանջուած տուրքը լրացնելու համար՝
հարկ եղաւ մերկացնել նաեւ երեսի վրայ ձգուած
հեթանոսական մեհեաններուն սոկերէն և արծա-
թեղէն արձանները:

Իհեկոս մօտեցեր էր սինկղիտոսներուն թով, ու-
րոյց մէջ կը գտնուէր նաեւ Պոմպէլիանոս քա-
ղաքապետն, որ Գոթացիներուն Հոռով մօտե-
նալու ատեն ստիպւեր էր ծերակոյտը՝ որ նորէն
հաստատէ հեթանոսական հանդիսաւոր զոհերը,
գիտնալով հանդերձ որ արարողութեանց կատա-
րուելու ատեն ոչ ոք կը գտնուէր մեհեաններուն
մէջ, վասն զի կոտ պաշտօնն այլ աս հետեւող-
ներ չունէր Զաւստեանական-Քաղքին մէջ: Իրի-
տասարդ պատրիկին իրեն անունը յափշտակող
խաբարային դէմ բողոքելէն վերջ՝ հրաման ըն-
դունեցաւ ընկերանալու Գոթացիներուն բանակը
զիպողը պատգամաւորութեան:

Քաղաքապետին մէկ ակնարկութեամբ՝ գերի-
ներն ու հասարակաց ծառաներն բռնաւորեցին
տուրքը տանող սպայերը, յետոյ սինկղիտոսներն
եկան ատենակալաց կառքերուն վրայ, և Գեկոս
փութվիտոս նստաւ անոնցմէ մէկուն թով, որ իր
հօրը հին բարեկամն էր:

Պղկեղիցիներն կորցրին անցան Հոռովմայ ճամ-
բաները լուռ ու տխուր բազմութեան մը միջին՝
որ հաւաքուած էր գանդից տեսնելու համար, և
զրեթէ իւրաքանչիւր Հոռովմայեցի անքերէն ար-
ցունք կը վազէր տեսնելով Գոթացիներուն տուիւ-
լիք հոն տուրքը:

Սալարայի դռնէն անցնելու ատեն՝ սինկղիտոս-
ներն ցաւօք սրտի կը յիշէին թէ ուրիշ անգամ
ներ ծերակոյտի անդամներն օրէնքներ կու տային,
իսկ հիմայ իրենք կ'ընդունին, և այն դռնէն շատ
անգամ անցեր էին Հոռովմական քաջամարտիկ
լեգէոններն՝ աշխարհոս ամեն կողմը տանելով ի-
րենց յաղթական արծուներն դրօշները:

Գոթացիներուն բանակադրութիւնն կ'երկա-
րաձգուէր Սալարայի ճամբէն մինչեւ Հոռունտա-
նա, և հակառակ կողմէն մինչեւ Պարիսի լեռ-
ները և Անիենոսի գետափառնունքը՝ Տիբերիսին
հետ, զբաւելով չքեղ ամարանոցները և այգեստան-
ները, որոնք այն ատեն կանգուն էին այ ընդար-
ձակածաւալ երկրին վրայ: Ալարիկոսի վրանն
դրուած էր դէպ ի կամօր՝ խոտորող ճամբուն
ձախակողմ, և անոր մօտ կը տեսնուէր ժողովքի
վրանն, ուր թագաւորին կողմէն խորհրդի կան-
չուած էին բանակին գլխաւորները:

Բարբարոս օգնողներն չպահապան նկարչական
երեսոյթ մ'ունէին, և պատաստուած էին իրենց
բովանդակ փառաւորութեամբ երեսնալու տուր-
քը բերող պատգամաւորներուն:

Բանակին մօտիկ կողմերէն յանկարծ լուռ-
ցաւ եղջերափողի մը ձայնն, և ահա կարգի մօտն
Գոթացիներն:

Ալարիկոս իր թագաւորական զգեստներով
պննագարդուած և բանակին գլխաւորներով շըր-
ջապատուած՝ դուրս ելաւ վրանէն, և իրմէն քիչ
մը հեռու կեցեր էր Անգելբերտ բանաստեղծն,
որ տալիւր ձեռքն առած՝ իր պատերազմական
երգերը կը հնչեցնէր:

Հատ չանցաւ՝ հեռունէն տեսնուեցան սպայերն,
որոնք դանդաղաքայլ առաջ կու գային. և երբ
թագաւորական վրանին առջեւ հասան՝ կանգ
առին հոն, և յետոյ սինկղիտոսներն կառքերէն
վար իջնելով՝ մօտեցան Ալարիկոսին:

Ամենէն առաջ անցեր էր ծերունի սինկղիտոս
մը՝ որ կը կոչուէր Փլաւիտոս Նեմէրիտոս, Դեկո-
սին հօրը բարեկամներէն մին. սա երբ հասաւ
Ալարիկոսին առջեւ՝ ազնուական արժանապա-
տուութեամբ մը ծռելով գլուխը, իր ընկերնե-
րուն կողմէն ըսաւ.

— Հոռով մը յոյէ քեզի իրմէն պահանջած
տուրքը, ո՞վ թագաւորը Ալարիկոս, և մանք ծե-
րակոյտի անդամք, ներկայացուցի՞ք պատրիկ-
ներու և հասարակ ժողովրդեան, կու գանք քեզ-
մէ խոստումն առնելու՝ որ հետանաս այս կողմն-
ընէ:

Գոռունակութեան ժպիտ մը փայլեցաւ Ալա-
րիկոսի շրթունքներուն վրայ, և ի նշան ողջու-
նի գլուխը ծռելէն վերջ՝ աւելցուց.

— Իրկիմի և զօրագնացիս առջեւ կ'երդում
հետանալ Հոռովմէն, ինծի վերապահելով նորէն
դառնալու իրաւունքն երբոր ուզեմ:

Սինկղիտոսներու աչքերուն մէջ զայրոյթն ե-
րուցաւ երբ լսեցին այս խօսքերը, և Փլաւիտո
Նեմէրիտոս ծերունիին վսեմութեամբ մը գլուխը
վեր բարձրացնելով՝ աւելցուց.

— Առանջած տուրքը շատ մեծ զոհողութիւն
ներով ձեռք բերուեցաւ. եթէ բանի մը պիտի
չգայ, այն ատեն խոստումդ նախատական ծա-

¹ Պատմական է այս դէպքը:

դրածութիւն մը կ'ըլլայ : Մի կարծեր որ մենք բողոքովին ողորմելի և լքածալ ենք, յուսահատութեան մի տանիր գմեզ, վասն զի կրնանք նուրէն այնպէս դառնալ, ինչպէս որ էինք երբեմն : Կայսրէն և իր լեզգոններէն ալ լքուած թողուած՝ մենք դարձեալ կրնանք պաշտպանել գմեզ . իւրաքանչիւր հոգովայեցի յիշելով իր նախնեաց փառքերը, կատարի կը դառնայ պաշտպանելու համար հայրենիքը, ազատելու համար իր ընտանի աստուածները օտարի լուծի տակէն և եթէ նաեւ պիտի ինկնայ, ի ինկնայ վնասութեամբ Ախարհոս-Դիլոյին աւերակներուն տակ :

— Ես երդուեցայ հեռանալ և երդմնազանցութիւն չեմ ընել, ըսաւ Ալարիկոս :

— Եւ մենք կը բաժնուիրք քեզով վստահացած խոտմանդ հաստարմութեան վրայ, աւելցուց փառիտ Նեմէրիտ, սեւեռած աշքերը դարձնելով Ալարիկոսին վրայ՝ որ ըսաւ .

— Բաժնուելէն առաջ պարպենք խաղաղութեան բաժակը :

Վայրկենի մէջ բացուեցաւ թաղաւորական վրանին մէջ ծայրը, և տեսնուեցաւ սեղան մը՝ որուն վրայ պարտաստ դրուած էր խորոված ոչխար մը և բազմաթիւ գինեկից սափորներ :

Պատգամաւորներն մտան վրանը, և մինչդեռ Ալարիկոսն ալ անոնց հետեւելու վրայ էր՝ Դեկոս մօտենալով անոր՝ ըսաւ .

— Եթէ ինծի, ով թագաւոր, կ'աղայիմ քեզի : Ինչ կ'ուզես երիտասարդ հոգովայեցի, պատասխանեց Ալարիկոս, համակրալից աչքով նայելով Դեկոսի գեղանի դէմքին վրայ :

— Բանակիդ մէջ մարդ մը կայ, որ յափշտակելով Դեկոս փուլվիտի անունը՝ կ'արատաւորէ զայն . այդ անունն իմն է, ես միայն իրաւունք ունիմ զայն կրելու, և ով որ իրեն կը ծեփահանէ այդ անունը՝ խաբեբայ մ'է նա :

— Երիտասարդ, եթէ անունը յափշտակեր է, իրաւունք ունիմ վրէժ խորհրդելու : Երիտքնիդ ալ հոգովայեցի էք թէ և ձեզմէ մէկը իմ գիտութեանս զէնքն վրան առած է, ուստի ես չեմ ուզեր ձեզի դատաւոր ըլլալ : Ժողովքի վրանին մէջ կը գտնուի հիմայ յանցաւորն, գնա՛ հոն, և եթէ ինքնօրէն տակ կը բաբախէ այրական սփրտ մը, կուտի գրգռէ գինեղ քեզի հետ :

Դեկոս իսկոյն գնաց թաղաւորին ցոյց տուած տեղը, և հազիւ թէ վրանին սեմին վրայ ոտքը կրիած՝ ետ քաշուեցաւ այլապէ՛մ՝ գոչելով ...

— Մարկեղոս, դու Գոթիացիներուն բանակին մէջ :

— Բարի եկեր ես Դեկոս, ըսաւ Մարկեղոս հեգնանքով ծայրով . դո՛ւ ալ, իմաստուն բարեկամդ իմ, թողուցիր հոգովմական արծիւները՝ որպէս զի ապաստանարան գտնես հիւսիսային հեկայ որդւոց մէջ :

Դեկոս կը նայէր իր հին բարեկամին վրայ, սաստիկ զարմանքէն չկարենալով առաջ տանիլ իւտը . ուրեմն իրեն անունը յափշտակողը Մարկեղոսն էր, Վաղերկոսի եղբայրն, անկիպ որուն կեանքը ազատել էր ինքն : Քիչ մ'ատեն լուռութունով մնալէն վերջը՝ իր զարմանքն փախուեցաւ զայրութի և արհամարհանքի . թեւերը

խաչաձեւ ծալից կտրեցին վրայ՝ և իր բնիկ հանդարտութիւնն ստանալով՝ յուշիկ ձայնով մը աւելցուց .

— Մարկեղոս, եթէ ձայնդ չի լսէի, պիտի չհաստատայի աքերուս . անկարգ ունակութիւններդ վերջապէս ստիպեցին զքեզ հոգովայեցի անունը ուրանալու : Դատարգ զենքերով գինուած կը մատնես հայրենիքդ, և ասով ալ չգոհացած՝ կը յափշտակես անունս և զայն կ'արատաւորես : Անիծեա՛լ է ուրեմն արիւնքը, վասն զի այնչափ չար էակներու երակներէն կը վազէ :

Աս վերջին խօսքերը արտասանելու ատեն, Դեկոս կ'ահնարկէր Վաղերիան, որուն կարծուած կեղծաւորութիւնն իրեն զգուանք կ'ազդէր :

— Ո՞ր ստատանան մղեց զքեզ ետեւէս ինկնալու ամէն տեղ քու յանդիմանութիւններովդ, ուրոք թէ կը ձանձարացնես և թէ՛ կը զայրացնեն զիս, գոչեց Մարկեղոս . քու անունդ ակընչիս իմիկէս աւելի անոյշ հնչեց, անոր համար ինծի անեփականեցի զայն . ան նորէն քեզի ըլլալ, ինչ պիտի ընեմ զայն : Իմացու՛ր քաղաքացիներով որ Մարկեղոս Ներէնոս՝ Գոթիացիներուն հետ միաւցած իր կուտի, և անհամբեր կը սպասէ այն վայրկենին՝ յորում թշնամի փազաղանքներուն հետ մէկտեղ պիտի կարենայ տիրել գոտոգ Ղոտովին :

— Վասն իմ շրթունքս խօսք չեն գտներ՝ բացաւրելու համար թէ ես որչափ կ'ատեն զքեզ, պատասխանեց Դեկոս՝ դառնացած Մարկեղոսի լրբութեան դէմ, որ կը պարծենար իր մատնելու թեան վրայ :

Վաղերկոսի եղբայրն կատաղութենէն կափ-կապուտ դարձաւ, և խոպոտ աղաղակ մը հանելով՝ դիմեց դէպ ի պատրիկին վրայ, ինչպէս թէ ուզէր վիրաւորել զանիկայ զաշոյնով՝ զոր հանել էր գօտիէն . բայց բարկութիւնը զսպելով՝ որ զինքը այսպիսի ամբթալի ոճրագործութեան մը կը մոլոր, ետ քաշուեցաւ, և դողդոջուն ձայնով աւելցուց .

— Դու ատեն մը իմ կեանքս ազատեցիր, հիմայ ալ ես քուցինդ, քանի որ չսպաննեցի զքեզ, ուրեմն ա՛յ ես քեզի պարտական չեմ :

Դեկոս բնաւ չ'այլայեցաւ . այլ թողորովին տոգոյն և անխելով մնաց առանց քայլ մ'ալ ետ քաշուելու : Մարկեղոսի կատաղութեան դէմ, և մատնչիկ խօսքերը լսելով՝ ծիծաղեցաւ դառնապէս և պատասխանեց .

— Այնչափ չեմ վախեր բարկութենէդ որչափ աւելի կը զարմանամ վեհանձնութեանդ վրայ, և անգամ մ'ալ կը կրկնեմ քեզի, որ մեծ է յանցանքդ :

— Ի՜նչ, լո՛ւ՛ մալ եւս, պոռաց Մարկեղոս, և բարկութենէն կուրցած՝ թեւը երկնցուց որպէս զի գարնէ Դեկոսի երեսին :

Իրիկի մը զայն առած՝ փուլվանց սերունդն կատաղաբար բռնեց Մարկեղոսի թեւէն, և իր կարելի ձեռքերն մէջ զայն ուժով մը սեղմելով՝ վրայ բերաւ .

— Ես կրնայի կտրել այս ձեռքը որ ուզեց նախատել զիս և որուն վրայ ըրածք ինծի նախա՝ տիւք պիտի չ'ասցընել, վասն զի մատնչի ձեռքն չի

կրնար աղտոնել համեստ քաղաքացւոյն պատիրը : Եթէ ես քրիստոնեայ չլլայի , պիտի անիծէի այն օրը՝ յորում կեանքդ ազատեցի . . . և կը քաջանայի քեզմէ , թող ներէ քեզի Աստուած և լուսաւորէ՛ մոլորեալ միտքդ . ես քեզմէ աւելի վեհանման գտնուելով՝ կը քածկեմ անունդ Հոռով-մայկեցոց առջեւ , որպէս զի ամենուն անէծքին չենթարկիմ զայն :

Այս բախումը՝ Դեկոս ելաւ ժողովքի վրանէն , և գնաց դէպ ի սինկիստոսներուն կողմը , որոնք կառնքերու մէջ նստած՝ մեկնելու վրայ էին : Դե-կոս երբ կ'անցնէր Ալարիկոսի վրանին առջեւէն , Գոթացիներու թագաւորն աչքը զարմնելով ա-նոր վրայ՝ նախատական կերպով մը բտաւ հե-տեւեալ խօսքը , զոր չլսեց Դեկոս .

— Վատասիրտ մ'է սա , որ վախցաւ իր թըն-նամոյն սուրբին :

Ալարիկոս չէր գիտեր որ շատ անգամ ա-ւելի քաջասիրտութիւն և ընդունած նախատանքի մը ներելը՝ քան թէ վրէժննդդի բլլալը :

— Ուրեմն , տեսար խաբեբայն : Ո՛վ է նա , ի՞նչ է անունը , հարցուց փալախոս Դեմէրիոս ծերու-նին :

— Անշնան ուսմիկ մը , որ արհամարհանքի միայն արժանի է , պատասխանեց պատրիկն : Գետոյ յուզեց կառք նստել , և պէտք զգալով միայ-նութեան և շարժումի՝ իր հոգւոյն զայրոյթը խաղաղելու համար , ուզեց ոտքով վերադառնալ Հռովմ , և հետեւէն հետուեցաւ կառքերուն՝ որոնք փոշինելու տարափի մը մէջ սրարշաւ հեռացան իր աչքերէն :

Իսնդաղաքայլ առաջ երթալով Սալարայի ճամբուն երկայնութեամբ , Դեկոս երբեմն երբեմն կառք վ'անուր , մերթ ետեւը զարմնելով գլու-կի՝ Գոթացիները , տեսնելու համար , որոնց գէն-քերը կը փայլէին արեւուն ճառագայթներուն տակ , և մերթ աչքերը զարմնելով դէպ ի Հռովմ , որուն վրայ խառացած կեցեր էր սեփ-սեւ ամպ մը՝ իբր յառաջընթաց անմիջական փոթորիկի :

— Թշնամիաց բանական ոսկեգօծուած է արեւուն ճառագայթներով , և Հռովմի վրայ կը գոռայ փո-թորիկն . խեղճ հայրենիք , ո՛ր գնացին մեծու-թիւններդ : Որդիդ կ'ուրանան գրեգ , և մտն ես ինկալաւու բարբարոսներու ձեռքը — , կը խորհրդ-դածէր Դեկոս ինքիւն , և ահա յանկարծ իր տխուր մտածութիւններն ընդհատուեցան երգով մը՝ որ կը լսուէր իր մօտին : Հնչուն էր ձայնն՝ որ լալագին և լի աշխուժի՝ կ'եղանակաւորէր երգը , որուն բանաստեղծութիւնն կը համապա-տասխանէր պատրիկն մտածութիւններուն , որ կանց առաւ զայն ըսելու համար , և հետեւեալ սրտմայից և յուսալից խօսքերն հասան իր ա-կանջին :

Կ'արտասուեն զու Հռովմ , ինչու կ'արտասուեն¹ . —

Կ'ըմբռնէ իւր դրանց դէմ գունգ խառնաղուծ .

Զուրկ տեսեց , հեծածագին և նրկուն ,

Ալարիկոս ցաւոյ մէջ օգնական մը չունի :

1. Քերթուած Աստվիտ Գլեիշ 79 և Գրանիկ :

2. Արիւնքն՝ Ս . Խաչն լայրաբարդին Քրիստոսի :

Մէկիկ մէկիկ իր հինաւորաց պրտակէն

Խլած են գոհար աղունքն ու փայլ լուսաւոր .

Իւր նահանգներն՝ իբրեւ անշէն անապատ ,

Թրքուառութեանց , կողոպուտից բոյն զարման :

Թորոտած աշխուճ իւր պարտելով ցաւալուն :

Ապաններն մինչ և Ովիւլա կը գիտէ .

Ճ' ամեն աեղ իր քաջամարտիկ անկեւոց

Կը նշմարէ անթաղ պոթիտ ոսկրներն :

Իր ծիածակտ օրերուն կեցծ մտերիմներն՝

Իրեն ցաւոց մէջ խաւարեւունջ են զարմեր .

Եւ արք ընկճուած ալքան անգը ճղուեցէն ,

Չունենալով մէկ մ'յուսատու՝ կը մեռնի :

Ո՛վ , չը մեռնի պիտոր . Աստուած իւր հետ է ,

Գազանք մ'իբն կայուն նոր զաւ կը կազմ .

Որքան դափնին կապիտալեան կը նուազի ,

Վատկանի թաշն աշխատ վէկ կ'ամբարձնայ :

Բարձրացոր , Հռովմ , ընկճեալ զուրկ արքունի ,

Դեղնոյ նա զու , և տակուին յաղթական .

Զի ուր նշանն ինկերուդինն՝ կը յաղթէ ,

Ո՛վ , չի օրեր հնո բրնձնութիւն ընկճողին :

Եւ՝ թէ վարկի մ'այ շարքերու ձեռք ինկնայ ,

Բայց սրբաբնուէր երկրի պղծոյց հեռքն ոտից

Պետի բլլայ փռույ իրման՝ որ կ'իջնէ

Տաճարներու վրայ , և քամին կը թրոցէն :

Մի՛ բնաւ հոգար , թէ սպանալից և դաժան ,

Կը՝ զոչէ դրանցով դէմ խառն անհաւատ ,

Մի՛ մի՛ վախնոր երբեք մոլի ամբոյն .

Այլ ազգէն լուկ որ կըրինք ուղղէ զայն :

Հաւեւ հերոսք մ'ալ կատարի թէ երբեք

Իշխէ խեթկէ մարտաբնուող դէմ ուժգին ,

Պետի ըզգայ՝ թէ զուն աշխարհ մ'ալ ծայր մ'են ,

Եւ վերամարծ վրսն Գազաք Աստուծոյ :

Վըստաւ բազմ՝ օ՛ն արքունի զաւիկ վրայ

Ջուր քեզ ինկից զազանք կու առն անասուն :

Եւ թէ մարծէ կապիտուլ զօրօն Գիտուի ,

Վատկանի սուրբ խաչըն քեզ կայ պաշտպան :

— Ո՛ր , խաչն որ հակադաճեւ կը կանդնի Հռովմի բարձր բլուրներուն վրայ՝ պիտի տապալէ զա-նիկայ որ կը յանդգնի պղծել մարտիրոսներու երկիրը : Կայսերաց Հռովմն հօգր էր , բայց ա-պագայ դարերու մէջ բովանդակ աշխարհն պի-տի խոնարհի Գրիստոսի Հռովմին առջեւ , գոչեց Դեկոս յափշտակուած լսած երգէն : Գետոյ նա-յուածքը չորս կողմը դարձուց , որպէս զի գտնէ երգիչը , և ահա տեսաւ երիտասարդ մը տալլորի-նակ կերպով հագուած՝ որ նստած էր Հասարա-կապետութեան ժամանակէն մնացած հին գերեզ-մանի մը աւերակներուն վրայ : Սա պարտելը հրա-պարակախօս մ'էր , որ Զապադիստոնէն կը շրջէր հեռաւոր երկրիներ իբրեւ բախտախնդիր . և տես-նելով Գոթացիներուն բանակը՝ ներշնչուեւր և յանկարծակի յօրինեւր էր այն երգը՝ զոր սրտի յուզումով լսած էր Դեկոս . « Հայրենիքն մեկ-նողիկ վերջին ողոյնն տխուր է — միանգամայն հանգիստեմ . թող ստուգուին քու խօսքերդ , ո՛վ ապիրշմանիկ , որ քիչ առնեն թափառական՝պի-տի շրջիս հեռու ծննդավայր երկրքէ՛ — , ըսաւ պատրիկն . յետոյ ի նշան ողջունի՝ ձեռքը եր-կընցուց դէպ ի երգին և նորէն ճամբայ ելաւ :

Շարաշախիկի

